Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(15/10)-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համազգեստի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04 հուլիսի 2017 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հարությունյանը, անդամներ՝ Արթուր Մանուկյանը, Միհրան Սարդարյանը, Դոնարա Հարությունյանը և քարտուղար՝ Վարդան Նավասարդյանը:

Բացակայում էր Արթուր Եղիազարյանը:

Օրակարգ

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(15/10)-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(15/10)-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լևոն Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը		Նախահաշվային գներ
	«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Զ. Սարկավագի 157	«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2	
	ԱԱՀ վճարող	ԱԱՀ վճարող	
	Գնային առաջարկը/ՀՀ դրամ, առանց ԱԱՀ/		
1	2975000	1498500	5280000
2	1642500	1350000	2646000
3	817500	599400	1188000
4	1975000	1498500	3630000
5	225000	247500	396000
6	225000	247500	396000
7	37500	-	45000
8	1642500	1647000	5940000
9	600000	449550	990000
10	651667	-	1619200
11	2020833	2081250	3000000
12	50000	100000	40000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ**-ին՝

- ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով:

- **«ԴԵՐՁԱԿ» ՍՊԸ**-ին՝

- ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, և 9-րդ չափաբաժինների մասով:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՀՀԿԱ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(15/10)-17/2 ծածկագրով գնման հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հաշվի առնելով, որ 12-րդ չափաբաժնի մասով մասնակիցների ներկայացված գները գերազանցում են նախահաշվային արժեքը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Նիստը վերսկսել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների օրը՝ 2017թ. հուլիսի 7-ին ժամը 12:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում /գնումների համակարգման բաժնում/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լևոն Հարությունյան

անդամներ _____ Արթուր Մանուկյան

_____ Միհրան Սարդարյան

_____ Դոնարա Հարությունյան

քարտուղար _____ Վարդան Նավասարդյան